# Այս համարում

## Հայերեն բաժին

1- Լոության պատնեշ.............................…...1
2- Հիշատակի հավերժացման օրը………2
3- Լուրեր – Իրանահայ համայնք ....…......3
4- Լուրեր – Հայաստան ………….……..5
5- Հասարակական……..............................8
6- Մշակութային.........................................9

Սյունակների սղության պատճառով

*Հրաչյա Աճառյանը Պարսկաստանում*

եւ

*Հայ հին գրականություն*
հոդվածների շարունակությունը կտպագրվի հաջորդ համարում

## Պարսկերեն բաժին

1- Լուրեր - Իրան, Հայաստան ....……1
2- Լուրեր - Միջազգային ……….….....2

**Շապիկի առաջին էջում՝**

Մշակույթի օր՝ Րաֆֆի համալիրում – Թեհրան

**Շապիկի վերջին էջում՝**

Արցախցի տղան

Համար 137, Հոկտեմբեր, 2007թ.

No. 137, October 2007

ماهنامه لویس – شماره ۱۳۷ مهر ماه ۱۳۸۶

*106-ի ընդունում*

## ԼՌՈՒԹՅԱՆ ՊԱՏՆԵՇ

*«Պատմությունը անավարտ վեպ չէ, այլ չավարտված ճակատամարտ»*

*Գարեգին Նժդեհ*

ԱՄՆ-ի Կոնգրեսի արտաքին հարաբերությունների հանձնաժողովում Հայոց ցեղասպանության ճանաչման 106-րդ բանաձեւի ընդունումը իսկապես կարեւոր պատմական ճակատամարտ էր, որն ավարտվեց մեր հաղթանակով: Հասկանալի է, որ սա միայն մի դրվագ էր պատմական այն իրադարձություններից, որոնք նախորդել էին Հայոց ցեղասպանության ճանաչման շուրջը ստեղծված լռության պատնեշի ճեղքման գործում: Իսկ այդ գործընթացը սկսվեց 43 տարի առաջ՝ 1964-ին, երբ եկեղեցիների համաշխարհային խորհուրդը դարձավ առաջին միջազգային կառույցը, որը պաշտոնապես ճանաչեց եւ դատապարտեց ցեղասպանությունը: Մեկ տարի անց՝ 1965-ին արդեն լատինամերիկյան փոքրիկ Ուրուգվայի խորհրդարանը փորձ արեց իր ճանաչմամբ բարձրաձայնել ու աշխարհին պատմել 20-րդ դարի սկզբին Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած մարդկության մեծագույն ողբերգության մասին: Հաջորդն արդեն Հարավային Ամերիկայի երկրների խորհրդարանն էր, որը ուրուգվայցի պատգամավորների նախաձեռնությամբ միացավ Հայոց ցեղասպանության դատապարտման կոնվենցիային: Սրանք սփյուռքում նոր-նոր ձեւավորվող հայկական լոբբիստական կառույցների առաջին հաջողություններն էին, որոնք չունեին հարցի միջազգային ճանաչողության առումով մեծ նշանակություն, սակայն մատնանշում էին, որ ճիշտ ուղղություն է ընտրված եւ սփյուռքը պետք է շարունակի այս աշխատանքը: Ուրուգվայի օրինակին շուտով հետեւեց Արգենտինան, որի խորհրդարանը նույնպես ճանաչեց Հայոց ցեղասպանությունը: Լատինամերիկյան երկրներում հայ համայնքների հաջողությունը ոգեւորեց աշխարհասփյուռ հայությանը եւ տարբեր երկրներում գործող հայկական համայնքները ցեղասպանության ճանաչման համար հզոր շարժում սկսեցին:

60-70-ական թվականներին սփյուռքում ձեւավորված հզոր կառույցները լոբբիստական աշխատանքներ էին տանում տարբեր երկրների խորհրդարաններում:" Ցեղասպանության փաստը ճանաչվեց եւ դատապարտվեց Կիպրոսի, Լիբանանի, Հունաստանի խորհրդարաններում: Սակայն ամենալուրջ հաջողությունը 1987-ին էր, երբ ցեղասպանությունը ճանաչեց Եվրոխորհրդարանը: Սա, կարող ենք ասել, 20 տարի շարունակվող քաղաքական պայքարի այն հաղթանակն էր, որ ցույց տվեց չավարտված պատմական այս ճակատամարտում,

թէկուզ նվազ ուժերով, կարելի է հասնել լուրջ հաղթանակի հզոր թշնամու նկատմամբ: 1987-ի ճանաչումը լռության պատնեշի ճեղքման առաջին լուրջ փորձն էր, որը ցույց տվեց նաեւ, որ սկսված գործընթացները կանգնեցնելն այլեւս անհնար է: Հայաստանի անկախացումը նոր թափ հաղորդեց այս ամենին, հատկապես երբ ցեղասպանության ճանաչման հարցը մտավ մեր երկրի արտաքին քաղաքականության օրակարգ: Կարող ենք ասել, որ սկսվեց ցեղասպանության ճանաչման, մինչ այդ չտեսնված մի ժամանակաշրջան, երբ մի քանի տարիների ընթացքում իրար հետեւից հայոց ողբերգությունը ճանաչեցին եւ դատապարտեցին Ռուսաստանը, Բելգիան, Շվեդիան, Շվեյցարիան, Ֆրանսիան, Իտալիան, Ավստրալիան, Վատիկանը, Կանադան, Սլովակիան, Լեհաստանը, Նիդեռլանդները եւ այլն: 2005-ին ցեղասպանության ճանաչման փաստը եւս մեկ անգամ վերահաստատեց Եվրոխորհրդարանը: Այս ճանաչումների մեջ հատկապես կարեւորվեց Ֆրանսիայի խորհրդարանի ընդունած որոշումը՝ օրենքի ուժ տալ եւ քրեական պատասխանատվության ենթարկել ցեղասպանությունը ժխտողներին:

Կարող ենք ասել, որ ճանաչման այս գործընթացում սկսվեց մի նոր ժամանակաշրջան, երբ խորհրդարանների կողմից ցեղասպանության ուղղակի ընդունումը եւ դատապարտումը այլեւս բավարար չէ եւ կարեւորվում է այդ հանցանքը ժխտողների նկատմամբ քրեական եւ դատական հետապնդումներ սկսելու գործընթացը: Այսինքն՝ միջազգային հանրության մեջ պետք է ձեւավորել այնպիսի կարծիք, որ Հայոց ցեղասպանության ժխտումն անգամ պետք է դիտարկվի որպես հանցագործություն: Հասկանալի է, որ ճանաչման այս գործընթացում առանձնակի նշանակութուն ունի ցեղասպանության դատապարտումը աշխարհի թիվ մեկ գերտերության՝ ԱՄՆ-ի կողմից: Սա մեր լոբբիստական կառույցների համար պայքարի դժվարագույն ուղղությունն է, սակայն երեկվա հաջողությունը վկայեց, որ ԱՄՆ-ի Կապիտոլիումի անառիկ ամրոցը, թէկուզ եւ մեծ դժվարությամբ տեղի է տալիս: Այս հաղթանակը հատկապես կարեւորվում է, քանի որ տեղի ունեցավ թե՛ Սպիտակ տան եւ թե՛ Թուրքիայի կողմից աննախադեպ ալիքի պայմաններում: Հանձնաժողովի անդամներից միայն 27-ը կարողացան դիմանալ այդ ճնշմանը եւ չփոխեցին իրենց դիրքորոշումը, իսկ մի քանի ամիս առաջ հարցը օրակարգ մտցնելուն կողմ էին քվեարկել 40-ը, դեմ՝ միայն 7-ը: Երեկվա քվեարկության ժամանակ կողմ քվեարկողների թվում էր նաեւ արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Թոմ Լանթոսը, հրեական ծագումով ազդեցիկ այս կոնգրեսականը նախկինում բազմիցս է դեմ արտահայտվել ցեղասպանության ճանաչմանը, սակայն այս քվեարկությունը վկայեց, որ բեկումնային գործընթաց է սկսվել նաեւ հրեական համայնքում եւ հրեական կառույցներում: Այդ կառույցներն արդեն չեն պաշտպանում թուրքական տեսակետները, հետեւաբար լուրջ հույսեր կան հաղթանակի համար:

Ինչեւէ, կարող ենք ասել, որ լռության պատնեշը ճեղքված է, սակայն դեռ վաղ է խոսել հաղթանակի մասին, քանի որ Թուրքիան շարունակելու է իր ահաբեկման եւ շանտաժի քաղաքականությունը՝ փորձելով ստիպել երկրներին եւ նրանց խորհրդարաններին լռել եւ չասել ճշմարտությունը:

*ԱՐՄԵՆ ՄԱՆՎԵԼՅԱՆ*

## ՀԻՇԱՏԱԿԻ ՀԱՎԵՐԺԱՑՄԱՆ ՕՐԸ



Ութ տարի առաջ՝ հոկտեմբերի 27-ին տեղի ունեցան եղերական սպանություններ հենց Ազգային ժողովի նիստերի դահլիճում, զոհ դարձան պետական բարձրագույն պաշտոնյաներ, գործիչներ: Ամեն տարի այդ դաժան օրը նշվում է Հայաստանում՝ վաղ առավոտյան սգո երթ են կատարում դեպի Եռաբլուրի պանթեոն: Այս տարի նույնպես բազմամարդ էր Եռաբլուր պանթեոնը: ՀՀ զինված ուժերի բարձրաստիճան սպայական կազմը պաշտպանության նախարար Միքայել Հարությունյանի գլխավորությամբ հարգանքի տուրք մատուցեց Սպարապետ Վազգեն Սարգսյանի գերեզմանի մոտ մեկ րոպե լռությամբ: Այնուհետեւ Երեւանի կենտրոնում սպարապետի անունը կրող փողոցում մասնակցեցին Վազգեն Սարգսյանի բրոնզաձույլ կիսանդրու բացման արարողությանը: Հոգեհանգստի պաշտոնի մատուցումին հետեւեց սգո միտինգը, ելույթներ ունեցան ՀՀ Ազգային ժողովի նախագահ Տիգրան Թորոսյանը, Միքայել Հարությունյանը, մտավորականներ: Պրն Թորոսյանը հատկապես նշեց. «Վազգենը մնում է մեզ հետ, մնացել է տարիներ շարունակ եւ մնալու է բոլոր սերունդների հիշողության մեջ, որովհետեւ նա եղել է մեր պետության սյուներից մեկը եւ շարունակում է մնալ այդ սյունը: Նա մեր բանակի եւ պետության ստեղծման, կայացման եւ հզորացման ամենամեծ երախտավորն է»: Նախարար Միքայել

Յարությունյանը իր խոսքում նշեց Վ. Սարգսյան անհատի, զինվորի եւ զորավարի անմնացորդ սերն առ հայրենիք: «Սպարապետի անմիջական ջանքերով դրվեցին մեր հաղթանակած բանակի հիմքերը: Նա առաջիններից մեկն էր, որ ճիշտ ժամանակին հասկացավ եւ զգաց անկախ ապրելու մեր իրավունքը, սեփական ուժերով պաշտպանվելու եւ կանոնավոր բանակ ունենալու անհրաժեշտությունը»:

Մեկուկես մետրանոց կիսանդրին տեղադրված է մոտ չորս մետր բարձրության գրանիտե պատվանդանի վրա եւ շրջապատված է ցայտաղբյուրներով: Յուշարձանի կառուցումը պատվիրել է ՅՅ պաշտպանության նախարարությունը, իրականացնողներն են ճարտարապետ Ասլան Մխիթարյանը եւ քանդակագործ Տիգրան Յովումյանը: Վերջինս արդեն զինվորական ակադեմիային նվիրել էր Վ. Սարգսյանի կիսանդրին ու հենց նրան էլ հանձնարարվեց այս նոր բրոնզաձույլ կիսանդրու ստեղծումը:

Կիսանդրու բացման ժապավենը կտրելու պատիվը տրվեց Վազգեն Սարգսյանի ծնողներին, որոնք որքան էլ հուզված էին, սակայն անթաքույց ուրախ, որ իրենց զավակը չի մոռացվել ու դարձել է ազգի անմոռաց զավակ:

Յոկտեմբերի 27-ին Ազգային ժողովում հիշատակի հավերժացման օր էր: Ութ տարի առաջ զոհված պետական ու քաղաքական գործիչների հիշատակը հավերժացնող ուշաքարի մոտ ԱԺ նախագահ Տիգրան Թորոսյանի գլխավորությամբ հարգանքի տուրք մատուցվեց Կարեն Դեմիրճյանի, Վազգեն Սարգսյանի, Յուրի Բախշյանի, Ռուբեն Միրոյանի, Միքայել Քոթանյանի, Արմենակ Արմենակյանի, Յենրիկ Աբրահամյանի եւ Լեոնարդ Պետրոսյանի հիշատակին: Ներկա էին եւ ծաղիկներով ողողեցին հուշաքարը Երեւանի քաղաքապետը, փոխվարչապետ Յովիկ Աբրահամյանը, նախարարներ եւ ԱԺ աշխատակազմի անդամներ:

Տիգրան Թորոսյանը պատասխանելով լրագրողների հարցերին, նշեց. «8 տարի է անցել այդ ողբերգությունից, սակայն, կարծում եմ, ցավը եւ ափսոսանքը երբեք չեն նվազել, թերեւս ավելացել են: Ընդամենը մեկ մխիթարանք ունենք մենք, որ այն խնդիրները, այն նպատակները, որոնք մենք ունեինք միասին, իրականացվում են, խնդիրները լուծվում են եւ այն երկիրը, որ մենք միասին էինք երազում կառուցել, քայլ առ քայլ կառուցվում է»:

Այդ օրը մարդաշատ էին նաեւ Կոմիտասի անվան պանթեոնը, ուր հանգչում է Կարեն Դեմիրճյանի աճյունը, քաղաքային պանթեոնը եւ Նորքի Սուրբ Մարիամ Աստվածածնի եկեղեցու բակը: Ամենքը հարգանքի տուրք էին մատուցում քաղաքական ու կառավարության այն անդամներին, որոնք մարդասպանների ձեռքով զոհվեցին:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

# Լուրեր

## Իրանահայ Յամայնք

### Թեհրանի պատվիրակությունը ՀՀԿ-ի (Համաշխարհային Հայկական Կոնգրեսի) շրջանակներում

2007 թվականի հոկտեմբերի 15-ից մինչև 17-ը Արցախում և Յայաստանում տեղի ունեցավ ՅՅԿ-ի օրերը, որի ընթացքում իրականացվեցին մի շարք ծրագրեր: Թեհրանի հայ համայնքի կողմից ՅՅԿ-ի հետ համագործակցություն իրականացնելու համար: սկզբնական քայլերը վերցվել են մի քանի ամիս առաջ: Պատվիրակության անդամներն էին 1- Պրն. Յարութ Քեշիշյանը՝ Միասնական Յամադրող Յանձնախմբի դիվանի նախագահ և Թեհրանի Յայոց Թեմի պատգամավոր, 2- Պրն. Աշոտ Սինանին՝՝ ԹՅԹ-ի պատգամավոր, տարիների փորձառու ուսուցիչ և Իրանի խորհրդարանի նախկին թեկնածու 3- Դկտ. Անդրանիկ Սիմոնյանը՝՝ Ազատ համալսարանի հայագիտության ամբիոնի վարիչ, ԻԱՄ Միության նախագահ, Իրան-Յայաստան բարեկամության ընկերության գիտական հանձնախմբի նախագահ և վարչության անդամ, 4- Պր. Երվանդ Ջամանին՝ ԹՅԹ-ի պատգամավոր և տարիների փորձառու ուսուցիչ, 5- Պրն. Վարդան Բաբախանյանը՝ ՅՄՄ «ՐաՖՖի» համալիրի հիմնադիր անդամ և երեցների բաժանմունքի նախագահ, 6- Պրն. Պետրոս Աբգարյանը՝ ՅՄՄ «ՐաՖՖի» համալիրի հիմնադիր անդամ, ԹՅԹ-ի պատգամավոր և Իրան-Յայաստան բարեկամության ընկերության մարզական հանձնախմբի նախագահ, 7- Դկտ. Ռուբիկ Սարդարյանը՝ ՅՄՄ «ՐաՖՖի» համալիրի նախագահ, ԹՅԹ-ի անդամ, «Լույս» ամսագրի պատասխանատու տնօրեն և Իրան-Յայաստան բարեկամության ընկերության հասարակական ու հարաբերությունների հանձնախմբի նախագահ:



Պատվիրակությունը հոկտեմբերի 13-ին արդեն գտնվում էր Արցախում, որտեղ հյուրընկալվեցին Արցախի «Յայկի Սերունդ» երիտասարդական հասարակական կազմակերպության կողմից: Արցախում պատվիրակությունը հանդիպումներ ունեցավ կրթության, մշակութային և գյուղատնտեսության նախարարների,

փոխվարչապետի և արտգործնախարարության տեղակալի հետ: Հանդիպումների ընթացքում քննարկվեց հնարավոր համագործակցությունների մասին, որ հյուսով ենք, ինչ որ տոկոսը իրականացվի:

ՀՀԿ-ի և Ռուսաստանի հայերի միության ներկայացուցչական կազմը հոկտեմբերի 15-ին ժամանեց Ստեփանակերտ, թեհրանահայ պատվիրակությունը միանալով նրանց մասնակցեց Ստեփանակերտում ժամանակակից դպրոցի հիմնադրման արարողությանը, որին մասնակցում էր նաև Արցախի նախագահ պրն. Բակո Սահակյանը: ՀՀԿ-ն երկու միլիոն դոլար ներդրում է արել այդ դպրոցը կառուցելու համար՝ դպրոցն ունենալու է ստանդարտ լողավազան, թենիսի խաղադաշտ և այլ ժամանակակից հարմարություններ: Այնուհետև պատվիրակությունը մասնակցեց Արցախի դպրոցներին համակարգիչներով ապահովելու ծրագրին, ՀԿԿ-ն մեծ



քանակությամբ համակարգիչ է տրամադրել Արցախի դպրոցներին: Դպրոցներից մեկում մի աշակերտ ելույթ ունեցավ և ասաց. «Մենք չենք ուզում Արցախը լքել, մենք ուզում ենք այստեղ ապրել ու ստեղծել մեր ապագան հենց այս հողի վրա»: ՀՀԿ-ի նախագահ պրն. Արա Աբրահամյանը նշեց, որ այս երեխաները մեր ապագան են, բայց մենք պետք է ապահովենք նրանց ապագան: Այցելություն եղավ նաև զորամասեր, նշվեց, որ կոնգրեսը տեխնիկապես կաջակցի նաև բանակին:

Թեհրանահայ պատվիրակությունը երկուշաբթի՝ հոկտեմբերի 16-ին մեկնեց Երևան և երկու օր ՀՀԿ-ի հետ միասին մասնակցեց մի շարք միջոցառումների, որոնցից կարելի է նշել՝ Հայաստանի Հանրապետության վարչապետ Սերժ Սարգսյանի հետ հանդիպումը, եղավ ՀՀ ազգային ակադեմիայում, որտեղ քննարկվեց մտավորականների տան կառուցման հարցի և ակադեմիկոսների ու մտավորականների ներուժի լավ օգտագործման մասին:




Թեհրանահայ 7 հոգանոց պատվիրակությունը հյուրընկալվեց Հայաստանի կարատեի դպրոցում, որտեղ առիթ ունեցավ ծանոթանալու կարատեի դպրոցի լավագույն սաների ելույթներին: Ցուցադրական ելույթներից հետո պատվիրակության անդամները երկար ժամանակ զրուցեցին ֆեդերացիայի նախագահի հետ, հայտնեցին իրենց տպավորությունները ու ցանկություն հայտնեցին երկուստեք համագործակցության մասին:

## Թեհրանահայ պատվիրակության առանձին հանդիպումը ՀՀԿ-ի նախագահ Արա Աբրահամյանի հետ

Թեհրանահայ 7 հոգանոց պատվիրակությունը, որ մասնակցում էր «Ռուսաստանի հայերի միության և Համաշխարհային Հայկական Կոնգրեսի օրերը Արցախում և Հայաստանում» ծրագրերին, առանձին հանդիպում ունեցավ ՀՀԿ-ի նախագահ պրն. Արա Աբրահամյանի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվեցին մի շարք համագործակցությունների մասին և պրն. Ա. Աբրահամյանը մի շարք տեղեկություններ փոխանցեց կոնգրեսի աշխատանքների մասին և որոշ ճանաչողական պայմանավորվածություններ ձեռք բերվեցին:
ՀՀԿ-ն աշխատում է աստիճանաբար ընդգրկել բոլոր սփյուռքահայ համայնքները, որպեսզի համայն հայության պոտենցիալ ուժը համատեղ օգտագործվի հայկական կարևոր հարցերի լուծման գործում:
Թեհրանահայ պատվիրակության տպավորությունը պրն. Արա Աբրահամյանից շատ դրական էր, նրանում տեսնում էր ժամանակակից տնտեսապես և քաղաքականապես հզոր հայ լիդերի պատկերը:
«Լույս» ամսագիրը իր հերթին ողջունում է համայնքի կողմից ձեռնարկված նման քայլերը, որոնք անպայման կնպաստեն համաշխարհային մասշտաբով համայնքների համագործակցությանը՝ հանուն հայության կարևորագույն հարցերի լուծման:

## Սեպուհ Արք. Սարգսյանը «Րաֆֆի»-ում

Հինգշաբթի՝ հոկտ. 25-ին ՀՄՄ «Րաֆֆի» Համալիրի վարչության նախաձեռնությամբ տեղի ունեցավ հանդիպում ՀՄՄ «Րաֆֆի» Համալիրի ակտիվ անդամների և Գերաշնորհ Տ.Սեպուհ Ս.Արք.Սարգսյանի հետ.:

Սկզբում Գերաշնորհ Տ.Սեպուհ Ս.Արք Սարգսյանը այցելեց համալիրի բացոդեա սրահը, բասկետբոլի և բիլիարդի սրահները, կանաչապատված ֆուտբոլի դաշտ, հետո վերադարձավ մարմնամարզական սրահ, որտեղ բոլոր անդամները սպասում էին իրեն:

Համալիրի նախագահ դկտ Ռուբիկ Սարդարյանը բոլորի կողմից բարիգալուստի խոսք ասաց և հետո ծանոթացրեց բաժանմունքների պատասխանատուներին, որոնք էլ առանձին- առանձին ներկայացրեցին իրենց աշխատանքները և խմբերի քանակը:

Սրբազանը իր ուրախությունը հայտնեց և գնահատեց համալիրում տարած աշխատանքները, նշեց, որ. «Մենք բոլորս մեկ ընտանիք ենք և ամեն ընտանիք ունի իր դժվարությունները, ամեն մի միություն, որ այս համայնքում աշխատանք է տանում ու գործում է, նման է ծաղիկի և իր աշխատանքը նման է ծաղիկի բույրին:

Մենք ապրում ենք սփյուռքում, պետք է ազգանվեր աշխատանք տանենք, այն՝ ինչ եղած է մեզի, ավելացնենք, Գնահատում եմ «Րաֆֆի» Համալիրին, որ այսքան խանդավառություն ունի համայնքի մեջ. կառուցողական աշխատանք պիտի ունենանք որ մեր ընկերությունը լավ պահենք, մարդկային ընկերությունը վտանգի մեջ է :

Մենք՝ որպես քրիստոնյա, կրոն պահելը մեր պարտականությունն ենք իմանում: Մենք ավանդական տոները իրենց արժակուրդներով ենք կարողանում բացատրել աշակերտների համար: Հետո նա խոսեց արտերկրում իր ունեցած հանդիպումների և մի շարք համայնքային խնդիրների մասին և այլն:

Վերջում տեղի ունեցավ հարց ու պատասխան և մի համեստ հյուրասիրությամբ ավարտվեց այդ որվա ծրագիրը:

*թղթակից: Նարինե Նազարյան*

## ՀՄՄ «Սիփան» Միության եւ ՀՄՄ «Արարատ» Կազմակերպության սկաուտական բաժանմունքների երդման արարողությունը

Հինգշաբթի՝ հոկտեմբերի 4-ին և ուրբաթ՝ հոկտեմբերի 12-ին տեղի ունեցավ ՀՄՄ «Սիփան» միության և ՀՄԱԿ Սկաուտական բաժանմունքների երդման արարողությունը: Արարողությանը ներկա էին Իսլ. Խորհրդարանում Հիւսիսային հայ պատգամավոր Գեորգ Վարդանյանը, ԹՀԹ-ի Պատգամավորական ժողովի, Ազգային մարմինների, Թեմական խորհրդի ու տարբեր միությունների սկաուտական բաժանմունքների ներկայացուցիչները:

«Սիփան» միության ծրագրի ժամանակ, բացման խոսքով հանդես եկավ խմբապետ Նարինե Բանդարյանը, իսկ «Արարատ» կազմակերպության ծրագրի ժամանակ հանդես եկավ սկաուտ Աղանա Չարմահալյանը: Ծրագրերում ընդգրկված էին երգ, պար, ասմունք, ֆիզիկական և շարքային աշխատանքներ:

Արարողությունների ընթացքում գնահատվեցին լավագույն սկաուտները և հանձնվեցին պաշտոններ ու աստիճաններ:

Օրվա կապակցությամբ իրենց խոսքերը արտահայտեցին ազգային իշխանության պատասխանատուները:

*Թղթակից՝ Լեռնիկ Վարդումյան*

# Հայաստան

## ԱՄՆ-ի ԿՈՆԳՐԵՍԻ ԱՐՏԱՔԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԲԱՆԱՁԵՎԸ

Արտաքին հարաբերությունների հանձնաժողովը հոկտեմբերի 10-ին, 22:30 րոպեին սկսած քննարկումների արդյունքում ընդունեց Հայոց ցեղասպանության ճանաչման մասին 106-րդ բանաձեւը:

## ՋՈՐՋ ԲՈՒՇՆ ԸՆԴԴԵՄ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՄԱՆ

Ներկայացուցիչների պալատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովում Ցեղասպանության բանաձեւի քննարկումից մի քանի ժամ առաջ ելույթ են ունեցել ԱՄՆ-ի նախագահը եւ պետքարտուղարը, կոչ անելով չդնել հարցը քննարկման: Կոնդոլիզա Ռայսը մասնավորապես շեշտել է, որ այս բանաձեւի ընդունումը «խնդրահարույց» կդարձնի ԱՄՆ-ի համար մերձավորարեւելյան քաղաքականությունը:

## Արամ Սարգսյանը նշանակվեց Արա Աբրահամյանի առաջին տեղակալ

Նոյան Տապան գործակալություն. 2007 թվականի հոկտեմբերի 17-ին Հայաստանի դեմոկրատական կուսակցության նախագահ Արամ Սարգսյանը ՀՀԿ-ի նախագահ պրն. Արա Աբրահամյանի կողմից նշանակվեց նրա առաջին տեղակալ, որը վերահասու կլինի կորդինացնելու և կառուցելու ՀՀԿ-ի սփյուռքի հայության կառույցները և զբաղվելու է համաշխարհային կառույցների համագործակցությամբ: Վերոհիշյալ որոշումը կայացել է ըստ պահանջի՝ նպատակ ունենալով գործնական քայլեր վերցնելու համահայկական հարցերի լուծման ուղղությամբ: Ստորև Ձեզ ենք ներկայացնում Արամ Սարգսյանի համառոտ կենսագրությունը: Ծնվել է 1946 թվականին Երևանում, 1966 թվականին միջնակարգը ավարտելուց հետո աշխատել է որպես բանվոր, 1972 թվականին ավարտել է «Բրյուսովի» անվան ինստիտուտի ռուսաց և արտասահմանյան լեզուների ֆակուլտետը, սովորելու հետ զուգահեռ աշխատել է մի գործարանի երիտասարդ կոմունիստների պարբերական թերթում, հետագայում՝ Սովետական Միության

«Կոմսոլսկայա Պրավդա» օրաթերթի աշխատակից Մոսկվայում:
1990 թվականի նոյեմբերին ընտրվել է Հայաստանի կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի քարտուղար իսկ հունիսին՝ կենտրոնական կոմիտեի առաջին քարտուղար: 1991 թվականին ստեղծվեց Հայաստանի դեմոկրատական կուսակցությունը, հենց առաջին համագումարում Արամ Սարգսյանը ընտրվեց առաջին քարտուղար: 1998 թվականի մայիսի 1-ից նա նշանակվեց, որպես Հայաստանի նախագահի խորհրդատու, սակայն 1999 թվականի հունիսին նա հրաժարվեց այդ պաշտոնից: Ամուսնացած է և ունի երեք երեխա:

*ՀՀԿ ԵՎ ՌՀՄ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՅՑԸ*

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻՆ



«Համաշխարհային հայկական կոնգրեսի եւ Ռուսաստանի հայերի միության օրերը Հայաստանում եւ Արցախում» ծրագրի շրջանակներում ՀՀԿ եւ Ռուսաստանի, Բուլղարիայի, Ուկրաինայի հայերի միությունների ներկայացուցիչները երեկվա միջոցառումները սկսեցին Ծիծեռնակաբերդում պսակադրությամբ՝ Կոնգրեսի Երիտասարդական կազմակերպությունների ասոցիացիայի, նաեւ Հայաստանի ավանդական կարատեի ֆեդերացիայի ներկայացուցիչների մասնակցությամբ:

Նույն օրը ՀՀԿ եւ ՌՀՄ ղեկավարությանն ընդունեց հանրապետության վարչապետ Սերժ Սարգսյանը, այնուհետեւ ՀՀԿ եւ ՌՀՄ պատվիրակության ներկայացուցիչները հանդիպում ունեցան ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահության անդամների հետ՝ քննարկելու գիտության աջակցության հիմնադրամի շրջանակներում եւ դրանից դուրս համագործակցության հեռանկարները:

«ՀՀԿ եւ ՌՀՄ օրերը Հայաստանում եւ Արցախում-2007» ծրագրի հերթական միջոցառումները երեկ ընդգրկում էին հիմնականում ՀՀԿ եւ ՌՀՄ համագործակցության բանակին նվիրված հատվածը: Արդեն մի քանի տարի նշված երկու կազմակերպությունները համագործակցում են հայոց բանակի հետ՝ բանակին տեխնիկական աջակցությամբ եւ ժամանցային ծրագրերի ներկայացմամբ: ՀՀԿ Երիտասարդական կազմակերպությունների ասոցիացիայի նախաձեռնությամբ այդ համագործակցության շրջանակներում հարստացվում են բանակի զորամասերում հանգստի սենյակները, մասնավորապես՝ տրամադրվում է գրականություն:

Պատվիրակության անդամները, որոնց թվում կային նաեւ զինվորական անցյալ ունեցող ներկայացուցիչներ, այցելեցին ՀՀ-ում Ռուսաստանի անվտանգության դաշնային ծառայության սահմանապահ վարչության Արտաշատի սահմանապահ ջոկատ, որին Կոնգրեսի անունից կտրամադրվի 7 համակարգիչ:

Մեկական համակարգիչ համապատասխան սարքավորումներով բաժանվեց ՀՀ զինված ուժերի Արմավիրի եւ Նուբարաշենի զորամասերին, նաեւ Երեւանի մայրաքաղաքային գնդին: Զորամասեր այցելած պատվիրակները ՀՀԿ եւ ՌՀՄ անունից պարգեւատրեցին ծառայության մեջ աչքի ընկած 20 զինվորի՝ տրամադրելով նվերներ: Այցելությունների ընթացքում Կոնգրեսի եւ Ռուսաստանի հայերի միության ֆինանսավորմամբ ներկայացվեցին նաեւ բազմաբնույթ համերգային ծրագրեր:

## Հայաստանի եւ Իրանի նախագահները վերահաստատել են փոխշահավետ համագործակցությունը զարգացնելու իրենց վճռականությունը

ԵՐԵՎԱՆ, 22 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի հրավերով այսօր երկօրյա պաշտոնական այցով Հայաստան է ժամանել Իրանի Իսլամական Հանրապետության նախագահ Մահմուդ Ահմադինեժադը: Ինչպես «Արմենպրես»-ին հայտնեցին ՀՀ նախագահի մամլո գրասենյակից, Իրանի նախագահի գլխավորած պատվիրակության կազմում են ԻԻՀ արտգործնախարար, միջկառավարական հանձնաժողովի նախագահ Մանուչեհր Մոթաքին, Նավթի նախարարի պաշտոնակատար պրն Նուզարին, նախագահի գլխավոր խորհրդական Սամարե Հաշեմին, Իսլամական խորհրդարանի պատգամավոր Նաթեղ Նուրին, պաշտոնատար այլ անձինք:

ՀՀ նախագահի նստավայրում բարձրաստիճան հյուրի դիմավորման պաշտոնական արարողությունից հետո կայացել է Ռոբերտ Քոչարյանի եւ Մահմուդ Ահմադինեժադի առանձնազրույցը:

Երկու երկրների ղեկավարները քննարկել են հայ-իրանական հարաբերությունների տարբեր բնագավառներին, համագործակցության ներկա վիճակին ու հեռանկարներին վերաբերող հարցերի լայն շրջանակ:

Ընդգծելով Հայաստանի եւ Իրանի միջեւ հարաբերությունների բարձր մակարդակը, որը հիմնվում է երկու ժողովուրդների վաղեմի բարեկամության վրա, կողմերը վերահաստատել են փոխշահավետ

համագործակցությունը զարգացնելու իրենց վճռականությունը:
Ռոբերտ Քոչարյանը եւ Մահմուդ Ահմադինեժադը տեսակետներ են փոխանակել նաեւ տարածաշրջանային ու միջազգային հրատապ խնդիրների վերաբերյալ:

Այնուհետեւ երկու երկրների ղեկավարների մասնակցությամբ տեղի են ունեցել հայ-իրանական բանակցություններ՝ ընդլայնված կազմով, որի ավարտից հետո նախագահներ Ռոբերտ Քոչարյանն ու Մահմուդ Ահմադինեժադն այցի արդյունքներով ստորագրել են համատեղ հայտարարություն: Ստորագրվել է նաեւ փոխըմբռնման հուշագիր Հայաստանի Հանրապետության եւ Իրանի Իսլամական Հանրապետության արտաքին գործերի նախարարությունների միջեւ գլխավոր հյուպատոսություններ հիմնելու մասին, ինչպես նաեւ՝ հուշագրեր երկու երկրների Կենտրոնական բանկերի միջեւ բանկային վերահսկողության մասին, Զարգացման հայկական գործակալության եւ Իրանի ներդրումային, տնտեսական եւ տեխնիկական աջակցության կազմակերպության միջեւ ներդրումային համագործակցության խրախուսման մասին, Հայաստանի հողմաէլեկտրակայանների կառուցման ծրագրի մասին:
Երկու երկրների ղեկավարները հանդես են եկել նաեւ համատեղ մամուլի ասուլիսով:

## ՀՀ Աժ նախագահը եւ ԻԻՀ նախագահը քննարկել են երկկողմ հարաբերությունների զարգացման հեռանկարները եւ միջխորհրդարանական կապերի խորացման հնարավորությունները

ԵՐԵՎԱՆ, 23 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: ՀՀ Աժ նախագահ Տիգրան Թորոսյանն այսօր նախաճաշ-հանդիպում է ունեցել ԻԻՀ նախագահ Մահմուդ Ահմադինեժադի հետ, որին մասնակցել են երկու երկրների դեսպանները, ՀՀ արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանյանը, ՀՀ էներգետիկայի նախարար Արմեն Մովսիսյանը, ԻԻՀ արտաքին գործերի նախարար, միջկառավարական հանձնաժողովի նախագահ Մանուչեհր Մոթաքին, ԻԻՀ նախագահի գլխավոր խորհրդական Սամարե Հաշեմին, ԻԻՀ խորհրդարանի անդամ Նաթեղ Նուրին, այլ պաշտոնատար անձինք:
Այս մասին «Արմենպրես»-ին տեղեկացրին ՀՀ Աժ հասարակայնության հետ կապերի վարչությունից, հանդիպման ընթացքում քննարկվել են ԻԻՀ նախագահ Մահմուդ Ահմադինեժադի՝ Հայաստանի Հանրապետություն այցի արդյունքները, երկկողմ հարաբերությունների զարգացման հեռանկարները եւ միջխորհրդարանական կապերի խորացման հնարավորությունները:
Կողմերը գոհունակություն են հայտնել այցի արդյունքներից՝ հայ-իրանական արդյունավետ համագործակցությունը համարելով հարեւանների միջպետական հարաբերությունների շատ լավ օրինակ:

# «ԵՐԱԽՏԱՊԱՐՏ ԵՄ ԱՍՏԾՈՒՆ, ՈՐ ՀԱՅԱՍՏԱՆՆ ՈՒ ԻՐԱՆԸ ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐ ԵՆ»




## *Երեւանի պետհամալսարանում հայտարարեց նախագահ Մահմուդ Ահմադինեժադը*

Հոկտ. 22-ին, Երեւանի պետհամալսարանում պատմական օր էր՝ դասախոսական կազմի հետ հանդիպեց Իրանի Իսլամական Հանրապետության նախագահ Մահմուդ Ահմադինեժադը: Հանդիպումը ողջույնի խոսքով բացեց ԵՊՀ ռեկտոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Արամ Սիմոնյանը: Նա նախագահ Ահմադինեժադի այցը համարեց հայ ժողովրդի նկատմամբ Իրանի բարեկամության նոր դրսեւորում, անդրադարձավ հայ-իրանական հարաբերությունների պատմությանը, ընդգծեց իրանահայ համայնքի բարեկեցիկ վիճակը եւ երկրում հայկական պատմամշակութային հուշարձանների վերականգնումը:
ԵՊՀ ռեկտորը նշեց նաեւ արեւելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի մասին, որտեղ մասնագիտական որակավորում են ստանում բազմաթիվ իրանցի ուսանողներ: Վերջում Արամ Սիմոնյանը ԵՊՀ գիտխորհրդի որոշմամբ պատվավոր հյուրին հանձնեց համալսարանի ոսկե մեդալն ու պատվավոր դոկտորի կոչման վկայականը:
Ելույթի սկզբում Իրանի Իսլամական Հանրապետության նախագահը երախտագիտություն հայտնեց Արարչին, որ Երեւանի պետհամալսարանում է. «Գիտությունը, ասաց նա, ճշմարտությունն է, լուսավորում է մութ անկյունները», ապա նյութական արժեքներին հակադրեց համամարդկային արժեքները, դատապարտեց չարիքն ու մարդկանց նսեմացումը: Այնուհետեւ նա ավելացրեց. «Երկրի երեսին պետք է իշխեն այն իշխանավորները, որոնք վեր են այդ բոլոր արատներից»:
Նախագահ Ահմադինեժադը խոսեց Աստծու արդարության մասին, ասաց, որ Արարիչը հորդորում է բոլորին արդար լինել, եւ շարունակեց. «Սիրելի մտավորականներ, յուրաքանչյուր անարդար քաղաքացի զրկվում է արդարամիտ լինելուց: Նվաստացնելու հակումը խախտում է տվյալ մարդու արժանապատվությունը, ճնշելը ճնշողին զրկում է

բարություն կատարելու հնարավորությունից, իսկ պատերազմներն սպառնում են մարդկանց կյանքին:
Համամարդկային արժեքների խախտման դեպքում խախտվում է մարդու արդարամտությունը, նա սկսում է ձգտել բռնության, նյութականին եւ այլ արատների: Բռնապետներն իրենց չարանենգ նպատակների համար զոհաբերում են արդարությունը, ոտնահարում մարդու արժանապատվությունը, որ տիրեն մարդկանց: Այսօր ի՞նչ է տեղի ունենում Իրաքում եւ ինչո՞ւ: Եթե միջազգային հարաբերություններում տիրեր արդարությունը, ապա մենք չէինք կանգնի տխուր փաստերի առջեւ, Պաղեստինը երբեք չէր հայտնվի պատերազմի մեջ, Աֆղանստանում եւ աշխարհի այլ ծայրերում արյունահեղություն չէր լինի: Իսկ համալսարաններն այն կրթօջախներն են, որոնք պետք է առաջնորդվեն Աստծու սահմանած արժեքներով եւ պայքարեն բռնությունների դեմ»:
Իրանի Իսլամական Հանրապետության նախագահ Մահմուդ Ահմադինեժադն իր ելույթն ավարտեց հետեւյալ խոսքերով. «Երախտապարտ եմ Աստծուն, որ Հայաստանն ու Իրանը եղբայրական երկրներ են, իրար կողքի են մեր ուսանողները, գործարարները, դիվանագետները եւ մեր ժողովուրդները: Ասում եմ, թող աշխարհը լսի, մենք հավերժ իրար կողքի ենք լինելու»:

## ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԸ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՆՁՆՎԵՑ




Մինչ Երեւանում՝ Ազատության հրապարակում նախագահ Ռոբերտ Քոչարյանի եւ նրա թիմի դեմ ելույթներ էին հնչում, վերջինս, իր ոճին համաձայն, մասնակցում էր նոր ճանապարհի պաշտոնական հանձնման արարողությանը: Հայաստանի նախագահը մեկնել էր Սյունիք՝ բացելու Հայաստան-Իրան ռազմավարական նշանակություն ունեցող ճանապարհահատվածը: Հոկտեմբերի 26-ին տեղի է ունեցել Կապան-Շիկահող-Մեղրի 90,7 կմ երկարության այլընտրանքային ավտոճանապարհի բացման պաշտոնական արարողությունը, որի ժամանակ Ռոբերտ Քոչարյանը նշել է, որ այլընտրանքային ճանապարհն անհրաժեշտ է Իրանի հետ համատեղ խոշոր ծրագրերի իրականացման համար: Իսկ այս ծրագիրը, ըստ նախագահի, իր շարունակությունը կունենա եւ կկառուցվի Կապան-Սիսիան նոր ճանապարհահատվածը, որը կշրջանցի Գորիս քաղաքը: 2005-ից Կապան-Շիկահող-Մեղրի ավտոճանապարհի շինարարության համար պետբյուջեից հատկացվել է 15 մլրդ 175 մլն դրամ գումար:

## Հայաստանի շախմատիստները հաղթել են Թուրքիայի եւ Ադրբեջանի թիմերին

ԵՐԵՎԱՆ, 2 ՆՈՅԵՄԲԵՐԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Հունաստանի Հերակլիոն քաղաքում ընթացող Եվրոպայի թիմային առաջնության 5-րդ փուլում Հայաստանի տղամարդկանց շախմատի հավաքականը սեւ ֆիգուրներով 2,5:1,5 հաշվով հաղթել է Թուրքիայի թիմին: Վլադիմիր Հակոբյանը հաղթել է Սուաթ Աթալիկին, Լեւոն Արոնյանը ոչ-ոքի է խաղացել Միխայիլ Գուրեւիչի հետ, Գաբրիել Սարգսյանը եւ Սմբատ Լպուտյանը ոչ-ոքի են խաղացել, համապատասխանաբար, Հազնադարօղլուի եւ Էրդողլուի հետ:
Հայաստանի շախմատիստները վաստակել են 7 թիմային եւ 12 միավոր անհատական պարտիաների հաշվարկում ու այժմ զբաղեցնում են 10-րդ տեղը: Մրցաշարի առաջատարն է Ռուսաստանի թիմը՝ 10 թիմային եւ 15անհատական միավոր, 2-րդ տեղում է Սլովենիան՝ 8 եւ 13 միավոր, 3-րդ՝ Իսրայելը՝ 8 թիմային եւ 12,5 միավոր անհատական պարտիաների հաշվարկում: Մրցաշարի 6-րդ փուլում Հայաստանի շախմատիստները սպիտակներով խաղալու են Հունգարիայի թիմի հետ: Կանանց մրցաշարում Հայաստանի հավաքականը սեւ ֆիգուրներով 2,5:1,5 հաշվով հաղթել է Ադրբեջանի թիմին:
Էլինա Դանիելյանը հաղթել է Զ. Մամեդյարովային, Լիլիթ Մկրտչյանը՝ Կադիմովային, Նելլի Աղինյանը ոչ-ոքի է խաղացել Տ. Մամեդյարովայի հետ, իսկ Սիրանուշ Անդրեասյանը զիջել է Ումուդովային: Հայաստանի շախմատիստուհիները 5-րդ փուլից հետո վաստակել են 6 թիմային եւ 11 միավոր անհատական պարտիաներում ու զբաղեցնում են 12-րդ տեղը: Մրցաշարի առաջատարն է Լեհաստանի հավաքականը՝ 9 թիմային եւ 15 միավոր անհատական պարտիաների հաշվարկում, 2-րդ տեղում է Վրաստանի հավաքականը՝ 8 եւ 14,5 միավոր, 3-րդ տեղում՝ Ռուսաստանի հավաքականը՝ 8 թիմային եւ 13,5 միավոր անհատական պարտիաների հաշվարկում: Վեցերորդ փուլում Հայաստանի կանանց շախմատի հավաքականը սպիտակներով խաղալու է Ռումինիայի թիմի հետ:

# Հասարակական

## Հարցազրույց Ջավախքի երիտասարդական ռադիոյի աշխատակից Հռիփսիմե Ղազարյանի հետ

- Ներկայացեք խնդրեմ:
- Հռիփսիմե Ղազարյանն եմ, Ջավախքի երիտասարդական ռադիոյի լրագրող, ներկայումս սովորում եմ Երևանի պետական համալսարանի լրատվության Ֆակուլտետում:
- Քանի հայկական դպրոց գոյություն ունի Ջավախքում.
- Ես Ջավախքի կենտրոնական քաղաքի տվյալներն ունեմ, որը կարող եմ ներկայացնել, այնտեղ գործում են 3 հայկական դպրոց: Դպրոցը հայկական թեքումով է, սակայն դժբախտաբար պետությունը ուզում է դա դարձնել վրացական, այսինքն բոլոր առարկաները

սովորեն վրացերեն և միայն շաբաթը մեկ օր հայոց լեզու և հայերեն առարկաներ:
- Որոշ տեղեկություններ փոխանցեք հայկական երիտասարդական ռադիոյի մասին:
- Դա ազգանվեր ռադիո է, նպատակը հայապահպանությունն է ու հայեցի դաստիարակությունը: Արդեն հինգերորդ տարին է, որ աշխատում է: Մինչ ռադիոյի հիմնադրելը հայ երիտասարդությունն ու երեխաները ավելի շուտ լսում էին արաբական, ռուսական և այլ արտասահմանյան երաժշտություն, սակայն հիմա ռադիոյի միջոցով տարածվել է հայ երգը:
- Ինչպես է ֆինանսավորվում ռադիոն.
- Ռադիոն ստեղծվել է երիտասարդների միջոցով և ֆինանսավորվում է նրանց կողմից և ոչ ոք չի օգնում:
- Հասարակական ու մշակութային կազմակերպությունների դերը ինչպիսի՞ն է:
- Նրանք փորձում են ամեն ինչ դարձնել հայկական և մեծ ազդեցություն ունեն Ջավախքում:
- Ջավախքահայերի տնտեսական վիճակը ինչպիսի՞ն է:
- Ամենամեծ դժվարությունն այն է, որ աշխատանք չկա, նախկինում այնտեղ տեղադրված էր ռուսական ռազմական բազա և որի աշխատողների մեծ մասը հայեր էին, սակայն այդ բազան տեղահանելուց հետո հայերը մնացին անգործ: Հիմա մեծ մասամբ տղամարդիկ գնում են ռուսաստան աշխատելու և կանայք զբաղվում են գյուղատնտեսությամբ:
- Ի՞նչ հեռանկար կա, որ տնտեսական վիճակը կբարելավվի:
- Վրացական պետությունը արտասահմանյան ֆիրմաներ է բերում և ասում են, որ այդ ֆիրմաները աշխատատեղ կստեղծեն, սակայն այդ ֆիրմաներում տեղավորում են հիմնականում տարբեր տեղերից բերված վրացիներին:
- Արդյո՞ք Ջավախքում հայկական կուսակցություններ աշխատում են:
- Մինչև այնքան, որ ես գիտեմ՝ որևէ կուսակցություն չի աշխատում.
- Խոչընդոտներ գոյություն ունե՞ն Հայաստանի կամ Արցախի հետ շփվելու հարցում.
- Չեմ կարծում հատուկ խոչընդոտներ լինեն, սահմանը միշտ բաց և ազատ է եղել: Սակայն պետությունը ծրագրել է ՀՀ և Վրաստանի սահմանի վրա մաքսատուն կառուցել, որտեղ կը խստանա առևտուրը և հատուկ մաքսեր կսահմանվեն ու ապրանքների գները կը թանկանան:

## ՊԺ-ի նիստերը դժվարությամբ են կայանում

2007 թվականի հոկտեմբերի 2-ին մեկ ժամ ուշացումով և 26 հոգու ներկայությամբ կայացավ Պատգամավորական ժողովի 41-րդ նիստը: Որոշված էր հաջորդ օրը նաև գումարել 42-րդ նիստը, սակայն դիվանի փոխատենապետ պրն. Ռուբիկ Կարապետյանը հայտնեց, որ կարծես այս տրամադրությամբ վաղվա նիստը չի կայանալու և չեղյալ է համարվում 42-րդ նիստը: Նիստին ներկա էր հյուսիսային իրանահայության պատգամավոր պրն. Գևորգ Վարդանին: Դիվանի կազմից բացակայում էր դիվանի ատենապետ դկտ. Լևոն Դավթյանը:
Պրն. Ռուբիկ Կարապետյանը տեղեկացրեց, որ այս անգամվա բացակայողներից միայն 8 հոգի են տեղեկացրել, որ չեն գալու և մնացածը անտարբեր են:
Թեմական Խորհուրդը ներկայացրեց տնտեսական և կրթական մարմինների թեկնածուների ցանկը և համառոտ տեղեկություններ նշված անհատների մասնագիտության և անցյալի փորձի մասին: Ըստ թեմի կանոնագրության՝ կրթական մարմնի կազմը պետք է լինի առնվազն 11 հոգի, սակայն 10 հոգի ավել թեկնածու չէր հարմարվել ներկայացնելու: Նախկին կազմից 3 հոգի էին ընդգրկված նոր կրթական մարմնի կազմում և, ըստ դկտ. Այիդա Հովհաննիսյանի, քանի որ աշխատանքը շատ ծանր է և շատ ժամ է խլում դժվարությամբ է լինում համոզել մարդկանց գալ և աշխատել: Բայց գիտենք, որ պատճառը միայն դա չէ և յուրաքանչյուր կուսակցության լիդեր, որ որպես նախագահ է նախատեսվել այդ մարմնի համար միայն իր թիմի և իրեն ենթակա մարդկանց լինելու հետ է համաձայն և չի կարողանում հանդուրժել ուրիշ ուժերի:
Սկզբից ներկայացվեց կրթական մարմնի ցանկը և վերջում 21 կողմ և 4 ձեռնպահ ձայներով ընտրվեց այդ մարմինը: Կրթական մարմնի անդամներն են հետևյալ անձնավորությունները՝ 1- Նորայր Արամյան, 2- Բեսի Հովհաննիսյան, 3- Քլարա Աղախանյան, 4- Նարեկ Ամիրխանյան, 5- Անժել Մեսրոպյան, 6- Ալֆրեդ Ղահրամանյան, 7- Ռիմա Ավետյան, 8- Էմիկ Մանուչրյան, 9- Արմիկ Գրիգորյան և 10- Արաքս Պողոսյան:
Հետո ընթերցվեց տնտեսական մարմնի ցանկը, խոսվեց նաև նման մարմնի անհրաժեշտության մասին: Անցյալում միայն մեկ շրջանում ենք այդ մարմինը ունեցել և մյուս շրջաններում դրա անհրաժեշտությունը չի նկատվել, չնայած, որ կանոնագրության մեջ դրա անհրաժեշտությունը նշված է: Դկտ. Այիդա Հովհաննիսյանը այն կարծիքն արտահայտեց, որ մեր համայնքի տնտեսական կյանքը պահանջում է տնտեսական ծրագիր ունենալ և այդ մարմինը ուսումնասիրություն պետք է կատարի և ծրագիր ներկայացնի: Այս մարմնում ընտրվեցին հետևյալ անձնավորությունները՝ 1- Պրն. Հենրիկ Խալոյան, 2- Տիկ. Սոֆի Ջաղարբեգյան, 3- Պրն. Սեպուհ Անդրիասյան, 4- Պրն. Դարվին Ավագյան, և 5- Պրն. Վաչիկ Ստեփանյան:

# Մշակութային

## ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՇԱԲԱԹ
## Հ.Մ.Մ.«Րաֆֆի»Համալիրի – Իրանահայ Ազգային եւ Մշակութային Միության համատեղ ծրագիր

Հոկտեմբերի 26-ին տեղի ունեցավ Հայ մշակույթի շաբաթվա առիթով կազմակերպված գեղարվեստական ծրագիր՝ համագործակցությամբ Հ.Մ.Մ.«Րաֆֆի» Համալիրի և Իրանահայ Ազգային և Մշակութային Միության:
Դահլիճը լեցուն էր, որտեղ ներկա էին նաև մի շարք հրավիրյալներ: Այդ թվում՝ Իրանում Հ.Հ.-ի դեսպանատան ներկայացուցիչ պրն. Սուրեն Գասպարյանը, Թեմական Խորհրդի ներկայացուցիչ պրն. Արա Շահվերդյանը և Մարո Այվազյանը, Միասնական Համադրող Հանձնախմբի նախագահ պրն Հարութ Քեշիշյանը, Ս.Թարգմանչաց եկեղեցական խորհրդի նախագահ պրն. Խեչո Խեչումյանը, «Սիփան» և «Նաիրի» միությունների,

Կաթողիկե եկեղեցու ներկայացուցիչները և ԹՅԹ-ից՝ թաղի մի խումբ պատգամավորներ, թեհրանահայ մամուլից՝ «Արաքս» շաբաթաթերթի, «Ալիք» օրաթերթի, «Յույս» երկշաբաթաթերթի և «Լույս» ամսագրի ներկայացուցիչները և այլոք:

Ծրագիրը սկսվեց ՀՄՄ «Րաֆֆի» Համալիրի սկաուտների երգով:



Օրվա բանախոսն էր՝ միջազգային հարաբերությունների մասնագետ, հասարակական, ազգային գործիչ պրն. Հրաչ Ստեփանյանը: Նա խոսեց տարբեր մշակույթների փոխհարաբերությունների և ընդհանրապես մշակույթի դինամիկ զարգացման մասին. Անդրադարձավ հայ համայնքի մշակութային արժեքներին, խոսեց նաև մի ցավոտ երևույթի՝ ուղղագրության հարցի շուրջ, նշելով, որ պետք է համայնքում խոսվի այդ մասին և անհիմն չպնդվի հին կամ նոր ուղղագրություններից որևէ մեկի գերակայությունը, այլ՝ ընդունվի, որ լեզուն էլ զարգանում է, հղկվում և որի արդյունքում է, որ մենք անցել ենք աշխարհաբար լեզվի գործածությանը:

Գեղարվեստական ծրագրի հատվածում ելույթ ունեցան՝ ՀՄՄ «Րաֆֆի» Համալիրի «Անի» պարխումբը Էլզա Մինասյանի ղեկավարությամբ և ԻԱՄՄ–ի «Երազ» պարախումբը Արսինե Օհանյանի ղեկավարությամբ: Հաղորդավարներն էին Արթին Բաղումյանը և Լիլիթ Սարդարյանը, որոնք իրենց խոսքը համեմում էին մերթ հայ պատմիչ Եղիշեի, մերթ Գևորգ Էմինի, մերթ Հովհաննես Շիրազի խոսքերով և մերթ էլ, պարզապես, երգով:

*Երգը զենքի պես զգույշ գործածիր,*
*Երբ խառն է դարը:*
*Նույն արճիճից են ձուլվում , իմացիր ,*
*Գնդակն ու … տառը:*

Ահա Գևորգ Էմինի այս տողերից հետո հաղորդավարները հրավիրեցին Արսինէ Պողոսյանին երգելու:

«Մայրիկ» երգի քնքուշ կատարումով հանդես եկավ Անոմէ Վարդումյանը: Այնուհետև ասմունքեցին Դալար Խեչումյանը, Փյունիկ Սիմոնյանը և Հուսինե Սաֆարյանը:

Բեմը՝ ինչպես «Րաֆֆի» Համալիրի բոլոր ծրագրերում, ցնցող էր ու գրավիչ: Տարբեր գույների հսկա մատիտներով և գունազարդ այբուբենով, ծաղիկներով շրջափակված բեմը ինքնին ստեղծագործություն էր, որի հեղինակն էր, իչպես միշտ , պրն.Հայկ Խաչավին: Գեղարվեստական ծրագիրը ավարտվեց Արթին Բաղումյանի «Զարմանալի է, որ ես չեմ եղել…» (Գ.Էմին) ասմունքով:

Այնուհետև ծրագրի ամփոփման համար բեմ հրավիրվեց «Րաֆֆի» Համալիրի նախագահ դկտ. Ռուբիկ Սարդարյանը, որն իր հերթին շնորհակալություն



հայտնեց բոլոր ներկաներին, հյուրերին, «Րաֆֆի» Համալիրի և ԻԱՄՄ-ի մշակութային բաժիններին. խոսեց համալիրի կողմից վերջին շրջանում տարբեր միությունների հետ համագործակցության մասին, այդ թվում՝ «Սիփան», «Արարատ», ԻԱՄՄ և այլ միությունների: Կարևորեց նաև համագործակցությունը Հայաստանի և Արցախի հետ: Հատկապես ընդգծեց Արցախում «Րաֆֆի» Համալիրի սկաուտների անցկացրած երկու բանակումները: Այնուհետև ծաղիկներ տրվեց մասնակիցներին :

Ծրագրի ավարտից հետո հյուրերի համար նախատեսվել էր նաև համեստ թեյասեղան:

## Սան Պաուլոյում ընթացող 31-րդ միջազգային կինոփառատոնում ցեղասպանությանը վերաբերող հինգ ֆիլմ է ներկայացվել

ԵՐԵՎԱՆ, 2 ՆՈՅԵՄԲԵՐԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Այս օրերին Սան Պաուլոյում ընթացող 31-րդ միջազգային կինոփառատոնում, որի հիմնադիրն ու անփոփոխ կազմակերպիչն է բրազիլացի հանրաճանաչ կինոտեսաբան, հայազգի Լեւոն Կակոֆը, ներկայացվել են ցեղասպանությանը վերաբերող հինգ ֆիլմեր, որոնց թվում են նաեւ Կարլա Կարապետյանի «Ճչացողները» եւ Էլին Թալենբերգի «Երկար վերադարձ դեպի տուն» կինոնկարները: Վերջիններս մեծ հետաքրքրություն են առաջացրել ոչ միայն փառատոնի մասնակիցների, այլ նաեւ բրազիլական հանդիսատեսի շրջանակներում:

Ինչպես «Արմենպրես»-ին հայտնեցին ԱԳՆ մամուլի եւ տեղեկատվության վարչությունից, այդ առիթով փառատոնի անցկացման ընթացքում հոկտեմբերի 25-ին կազմակերպվել է Հայոց ցեղասպանության հարցերին վերաբերող բանավեճ-քննարկում, որին մասնակցել են քննադատներ եւ կինոգործիչներ, բրազիլահայ մտավորականներ ու լրագրողներ, ինչպես նաեւ կինոսիրողների մի լայն շրջանակ: Որպես բանախոսներ հրավիրվել են ֆիլմերի հեղինակներ Կարլա Կարապետյանն ու Էլին Թալենբերգը, ինչպես նաեւ Լեւոն Կակոֆն ու Սան Պաուլոյի համալսարանի հայագիտության ամբիոնի վարիչ Լուսինե Եղիազարյանը:

Քննարկումների ընթացքում վեր են հանվել հայ ժողովրդի պատմության այդ ամենածանր ողբերգության շարժառիթներն ու հետեւանքները, Թուրքիայի ներկայիս կառավարության ժխտողական կեցվածքը Ցեղասպանության ճանաչման նկատմամբ, այդ համամարդկային ողբերգության միջազգային ճանաչմանն ուղղված ներկա զարգացումները: